

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Purpurquid

Appz subkopfe

Supplungpfe

891.99.092

p-18

92

-6 NOV 2011

Գ Ր Ի Ձ

ՈՍԿԵԳՐԻՁ ՄԱՏԵՆԱԳՐԻՆ

ՄԵՍՐՈՎԲԱՅ ԳԱԻԹԵԱՆ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ

ԵՒ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԳՐԵԱՑ

ՄԵՍՐՈՎԲ ՅԱԿՈՎԲ ՍԷԹԵԱՆՑ



ՎԵՆԵՏԻՆ - Ս. ՂԱԶԱՐ

1926

ՅԳՂ.ԳԳ.ՕԳԶ

Թ - 18

391.99.092

թ-18

Գ Ր Ի Ձ

ՈՍԿԵԳՐԻՁ ՄԱՏԵՆԱԳՐԻՆ


ՄԵՍՐՈՎԻԱՅ ԴԱԻԹԵԱՆ ԹԱՂԻԱԳԵԱՆՑ

ԵՒ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գ Ր Ե Ա Ց

ՄԵՍՐՈՎԻ ՅԱԿՈՎԻ ՍԷԹԵԱՆՑ



ՎՆԵՆՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

1926

Գեղեցիկ է մանաւանդ ի մնա եռանդն հնոյ ազնուական բար-
բառոյ նախնեաց մերոց, որով վարի յամենայն շարագրածս իւր
և ի նամականին անգամ. թէպէտև բաղձամբ իւր չիցեն բաւական
յարձարձել զնոյն ոգի ի զրիչս անդ ազգիս, յորոց կէսք թէպէտ
սիրողք նմին լեզուի՝ յակամայ հրաժարեցին յայնմամէ ի սլատ-
ճառս անզիտանալոյ բազմաց զնոյն և արհամարհութեան այլոց
սզխտացելոց զայն, զորս ողջմտութիւն և գեղեցիկ ախորժակը
դատապարտ առնեն և տռնիցեն ցանգ:

Ցաւէ մեզ լսել՝ զի ի տապախառն անդ աշխարհի խանգա-
րեալ իցէ առողջութիւն սլատուական բանասիրին, որում մաղ-
թեմք ընդ երկար կենդանութեանն ունել անշէջ և զհուր՝ որ վառէ
և վարէ զսիրտ նորին և զգրիչ, զայլ և զնոյնգումակ արդիւնական
փոխանակելով ընդ սիրական գրչի քերթողին և իւր, որում գյե-
տինն ետ զողջոյն այնքանեաւ զորովական հրաժեշտիւ:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

Աստղիկան, և կաշեալ զձեռանէ չընաղ օրիորդի միոյ Նոր-
Չուղայեցոյ, զնայ մտանէ ի տաճարն Հիմնայ, և ընկաշնու
ի վերայ արդէն ծանրաբեռնեալ ուսոց իւրոց և զքաղցր լուծ
ամուսնական երջանիկ կենաց:

Օրիորդն այն չընաղ և համեստափայլ էր չորրորդ դուս-
տրը հաւուն իմոյ Սեթայ Մկրտչեան Աղազար Սէթեանց,
Թանգ կամ հասարակ յորՉորջմամբ Թանկում կամ Թանգ-
խաթուն կոչեցեալ:

Զկարճատե սիրահարութենէ՛ և զամուսնութենէ՛ Թաղիա-
ղեանի թէպէտե լուեալ եմ բազմիցս ի բերանոյ բարեյիշա-
տակ հօր իմոյ Յակովբայ Սէթեանց (1820-1899), զի լեալ
էր նա փեսեղորայր ի ժամու հարսանեացն, զոլով կրտսեր եղ-
բայր հարսին, այլ սակայն թող ինքն Թաղիաղեան իւրով
հմայիչ և յաւէտ դիւթական զրչաւ երգեսցէ՛ զիւրոյ երա-

1. Թէ որքան սիրէր նա զսիրուհին իւր չընաղ, ի յայտ գայ ի հետեալ գեղե-
ցիկ բերթուածոյն՝ զրեալ նախ քան զամուսնանալն ընդ Թանգայ կամ Թանդխա-
թունի Սէթեան:

Զ Ե Փ Ի Ի Ռ

Զեփիւս հեղիկ զովարար,
Մե՛ դու այդքան շուտանար:
Թէ՛ զնաս հպել Թանկայ
Եւ նովին անուշանալ,

Օրիորդին Սէթայ տուր
Զինէն այս անուշակ լուր՝
Թէ՛ փեսայն քո կաթոզնի
Զո՛հէ քեզ զկեանս իւր:

Եւ դու յորժամ կնդրկեալ
Վաղիւ անդուստ առ իս գալ
Ախորժիցիս, բոյր զանոյշ
Զնորս ի քէն առեալ՝

Անմահանամ ի մարմնի,
Տերբեմ երկնից կամարի,
Եւ յայնժամ քո ի շնորհ
Արշալուսեմ ողջոյն զօր:

2. Յիւրում օսկեղենիկ մատենական — Եղերբերգութիւն յօրհաս Թանկայ Թա-
ղիաղեանց — բերթոզն խօսի զիւրոյ ամուսնութենէն այսպէս.

«Այլ վտարանդին այն բազմավարան
Անցեալ անվեհեր յարկածից համայն
Այն ինչ ի Զուղա, անզբաղ մտօր
Վերին շնորհաց լինէր երգարան:

նութենէն, որ սակայն բերմամբ կոյր բազդին յոյժ կարճատե
եղև, զի յետ երկց ամաց ամուսնական երջանկաւէտ կենաց
կորոյս մինչ իսպառ զանզուգական հատոր սրտին, որով և
զոգցես թէ՛ այլ ևս խաւարեցաւ մինչ ցայն վայր պայծառ
հորիզոն չարաբաստիկ կենացն, որպէս ի յայտ գայ ի բազ-
մական ողբոցն՝ որք տեսանին յէջս իւրոյ «Եղերբերգութիւն
յօրհաս Թանկայ Թաղիաղեանց» կոչեցեալ երկասիրութեան,
չարազրեալ անմիջապէս յետ մահու չընաղին ի Գավրէժ
Պարսից յամին 1837:

Արդ յորժամ նոր խօսեցեալ էր Մեսրոպը ընդ Թանկայ,
առաքէ մատանի մի առ սիրուհին չընաղ ի ձեռն Սիրվարդ
անուն տիկնոջ, որ էր ազգականուհի Թանկայ, զրելով նմա
և նամակ մի կամ ձօն չափեալ ոտիւք ի լեզու Չուղայեցոց,
զի տարեալ ընթերցցի ի լուր չընաղին՝ ի յայտնութիւն և
ի նշանակ բուռն սիրոյ իւրոյ. զի քերթողք միայն՝ յորս
վառի անշէջ հուրն երկնային՝ կարեն սիրել սերտիւ և ան-
հուն իմն աւիւնով:

Նամակն ողջունարբեր ուղղեալ առ Տիկին Սիրվարդ,
որոյ դնեմ աստանօր զնամակնաւոպիւնն իսկական զրչու-
թեամբ Թաղիաղեանի, ունի օրինակ զայս:

Ուր երկնապատում նորա ստեղծաց
Զայնակից եղեալ հաւուց երգեցկաց,
Այնքան երաժիշտ քաղցր եղանակօր
Կրթէն զհոգիս ի նոր զմայլանս:

Մինչ ափսոսացին Գիք զնա միայն
Թողուլ ամուրի և անօգնական,
Ունտի ընտրեցին լաւն յօրիորդաց
Կցորդել նորա անվախճան կենաց:

Գողարական շնորհ Տան Աղազարեան
Թանկազին պարզե Թանկխաթուն Սէթեան,
Ոյր զեղ փարատէ ըմբոյլ մտաց,
Էւ ալ զկշիւ բուռն ազրատութեան:

Բարեսուն զաւակ լուսակրօն նախնեաց
Ծագեալ յարմատոյ կրկին իշխանաց,
Որ իշխեալ կրից քան հպատակաց,
Նահեցան անձանց ճշմարիտ պարծանս»:

«Սիրելի Սիրվարդ իմ, բարով ողջանաս,
Թանգում օրիորդին զիզանի՛ գնաս,
Շատ կարօտ բարես տաս ու հասկանաս,
Թէ երբ այ իւր կամքն, որ իրար տեսնենք:

Ես էս քանի օր այ դոր որ կար՝ տեսայ,
Սիրարս գնաց հետը, միտքս մոլոր այ.
Թէ Աստուած կսիրես, երբ տեսնես, ասա՛,
Որ եթէ հաճենայ՝ իրար հետ խօսենք:

Թէ որ ինքն թանգ այ, ես էլ չեմ էժան,
Այլոց չհաւատայ, բոլորն էլ զիժ ան.
Ինքն իմն այ ես իւրն մինչև յաւիտեան,
Եթէ որ կամենայ իրար հետ ապրենք:

Ասա՛, ախոսս որ կարգալ չես գիտում,
Սիրածիդ գրածն սրտում չես գրում.
Քեզ համար պատրաստ այ ազնիւ գիտութիւն,
Եթէ շո՛ւա կամենաս իրար գտանենք:

Հայիֆ՞ որ Չահիլ՞ այ դեռ հասկանում չի,
Միշտ սիրվել ուզում այ, ինքն սիրում չի.
Բայց լաւ սիրելոյ կերպն կսովրի,
Եթէ որ ցանկանայ իրար հետ ըլնենք:

Օրիորդ Թանգում գոլով անգրագէտ, որպէս էին արդէն
համայն օրիորդք և տիկնայք Նոր-Չուղայի զայնու ժամանա-
կա՝ առ ի չգոյէ ազգային վարժարանաց վասն կրթութեան
զողարական սեռին, ուստի գրէ զպատասխանի ոտանաւոր
զբութեան իւրոյ գիտնական սիրահարին՝ ձեռամբ կրտսեր եղ-
բօր իւրոյ Յակովբայ (հօր իմոյ), որ էր և յայնժամ մի ի
յառաջադէմ աշակերտացն Թաղիաղեանի յԱմենափրկչեան
ճեմարանին Սամանց որ անդ ի Նոր-Չուղա:

1. «Գիզանի» ذيدى է բառ պարսկերէն և նշանակէ այցելութիւն:
2. «Հայֆ» حيف է բառ Պարսից և նշանակէ ափսոս:
3. «Չահիլ» جاهل է նոյնպէս բառ պարսկերէն և նշանակէ անփորձ:

Արեւիկ Արեւարդի՛ բարով ողջանաս.
Թանգում Օրիորդին գիզանի գնաս.
Շատ կարօտ բարես տաս ու հասկանաս.
Թէ երբ այ իւր կամքն, որ իրար տեսնենք:

Ես էս քանի օր այ դոր որ կար՝ տեսայ,
Արգիւս գնաց հետը. Քոտս մոլորայ.
Թէ ԱՅ Չահիլն այ. երբ գիտես, ասա՛,
որ է թէ հաճեալայ, իրար միտ խօսել:

Թէ որ ինքն թանգայ. ես էլ չեմ էժան.
Այլոց չհաւատայ. բոլորն էլ զիժ ան.
Ինքն իմն այ ես իւրն մինչև յաւիտեան.
Եթէ որ կամենայ իրար հետ ապրենք:

Ասա՛, ախոսս որ կարգալ չես գիտում.
Արածիդ գրածն սրտում չես գրում.
Քեզ համար պատրաստ այ ազնիւ գիտութիւն,
Եթէ շո՛ւա կամենաս իրար գտանենք:

Հայիֆ որ Չահիլն այ դեռ հասկանում չի,
Միշտ սիրվել ուզում այ, ինքն սիրում չի.
Բայց լաւ սիրելոյ կերպն կսովրի,
Եթէ որ ցանկանայ իրար հետ ըլնենք:

Յետ հրատարակութեան «Գիտողագրին» որ տպագրեցաւ ի կ. Պօլիս յամին 1888 ի Մկրեան քահանայէն, Յովհաննէս Շահնազար Սարգսեան նոր զարթեալ գողցես ի ընոյ յետ իբր 40 ամաց՝ առ ի յարգել զյիշատակ իւրոյ բազմերախտ վարժապետին. և ըստ յատուկ և թախանձագին խնդրանաց և յորդորանաց իսկ Մկրեան հայկաբան և բանասէր քահանային, սկսաւ անագան ուրեմն ի խոյզ և ի խնդիր լինել զհետ նշխարաց անտիպ երկոց և գրութեանց քերթողին աստ և անդ: Յաջողեցաւ նմա գտանել աստ ի կալկաթա առ ընթեր հինաուրոց բարեկամին իւրոյ և աշակերտակցին իսկ Պարոն խաչկայ Թաղէոս Աւետումեանց՝ ձեռագիրս ինչ անտիպ օրագրութեանց և քերթուածոց Թաղիաղեանի, զորս անմահ քերթողն ի ժամ ելանելոյն իւրոյ աստի յամին 1857 յանձն արարեալ էր իւրոյ ուսումնասէր և լաւ աշակերտին և հօրամոյն որդւոյ իսկ անձնուէր բարեկամին իւրոյ Թաղէոսի խաչիկ Աւետումեանց, զորմէ յիշեալ եմ արդէն երկարօրէն ի բանասիրականին իմում՝ որ հրատարակեցաւ ի պատուական «Բազմավէպ»ին վասն 1918 ամին ընդ վերնագրաւս, «Երազ ուխտաւորի ուրուք առ շիրմի Թաղիաղեանի»:

Յամսեանն Մարտին նոյն 1890 ամին, յորժամ նուստութիւն իմ ուսանող էր ի «Հայկեան Մարզասիրական ճե-

1. Պարոն խաչիկ Թաղէոս Աւետումեանց՝ որդի Պարոն Թաղէոսի խաչիկ Աւետումեանց, մտերմին Թաղիաղեանի, էր մի ի յառաջադէմ աշակերտացն Սուրբ Սանդուխտ զպրոցին Թաղիաղեանի: Թարգմանեալ էր և սա յաւուրս ուսանողութեանն գմատենիին «Սոպէսան համոտ», յանդիւականէն թարգմանեաց ի Հայ Պարոնիկ խաչիկ Թ. Աւետումեանց աշակերտ Ս. Սանդուխտ յօգուտ Արեւելոց Պարոնիկ խաչիկ Թ. Աւետումեանց զպատիւր Սարգսեանի ի կալկաթա յամին 1850: «Արեւելոց ընկերութիւն» յօգուտ որոյ թարգմանեալ էր այն մատենիկ 60 իջեան, վեշտասանածալ, կազմեալ էր յուսանողացն անտի որք յոտս Թաղիաղեանի աշակերտէին ի զպրոցին Սուրբ Սանդուխտ: Պատմէր ինձ բարեյիշատակ Պ. խաչիկ Թ. Աւետում 33 ամօք յառաջ, յորժամ նոր ծանօթացեալ էի ընդ նմա, թէ յորժամ հանդերձեալ էր վարժապետ իւր ելանել աստի ի վերջ կոյս 1857 ամին և գնալ յաշխարհ հայրենեաց, գնաց ինքն առ Թաղիաղեան և խնդրեաց ի նմանէ բազում թախանձանօք ընկերել ինքեան ի առն լուսանկարչին և առնուլ զլուսանկար իւր ընդ աշակերտին. այլ սակայն տուն լուսանկարչին և առնուլ զլուսանկար իւր ընդ աշակերտին, ցաւօք սրտի Թաղիաղեան բացէ ի բաց մերժեաց զհրաւէր նորին բարեկամացն ի կալկաթա յամին: Թէ ինքն զուով վերջին շառաւիղ Թաղիաղեան տոհմին, չկամէր զի պատկեր իւր միայն յաշխարհի, որովհետեւ զրական վաստակը իւր բաւականը էր արդէն անմահացուցանել զինքն:

մարանին» քաղաքիս յուսումն Հայ և Անգլիացի դպրութեանց, գրեալ կոչեաց զիս առ ինքն յաւուր միում հօրաքերթողին իմ Յովհաննէս Շահնազար Սարգսեան, և եղ առաջի իմ ըզնորագիւտ ցեցակեր և գունատեալ զձեռագիրսն, խնդրելով յինէն մեծաւ զգուշութեամբ և խղճի մտօք ընդօրինակել զայնս անսխալ՝ վասն տպագրութեան ի փառս յաւերժական յիշատակի իւրոյ բազմերախտ վարժապետին և իմոյ իսկ անուանակցին, տալով ինձ ի նմին ժամու և զրիչ մի հնաճաշակ և տձե, պատուիրելով ինձ յատկապէս նովին գրչաւ իսկ ընդօրինակել զձեռագիրսն Թաղիաղեանի և ոչ այլով: Իսկ ես որ դեռ ցայնվայր չգիտէի զպատմութիւն գրչին, ասացի ցնա միամտաբար և փոքր ինչ հպարտութեամբ, դու ասա տղայական գոռոզութեամբ, թէ ես արդէն ունէի գրիչս բազումս թեթեւ դիւրաշարժս իսկ. ժպիտ իմն խորհրդաւոր պատեաց գերեսօք պատկառելի ծերունւոյն, և սկսաւ իւրով սովորական լուրջ և ազդու բանիւք խօսիլ այսպէս.

«Ես լաւ գիտեմ՝ թէ գրչի պակասութիւն չկայ յայսմիկ ժամանակի. այլ սակայն եթէ դու միայն իմանայիր թէ որոյ գրիչ էր այդ, գիտեմ թէ չպիտի բնաւ մերժէիր ստանալ զայն ի ձեռաց իմոց: Գու որպէս տեսանեմ՝ սիրես և յարգես ըզնորատակ Մեսրոպայ, և ես հրճուիմ ի հոգի և ի սիրտ կենսի յիշատակ Մեսրոպայ, և ես հրճուիմ ի հոգի և ի սիրտ կենսի յիշատակ տեսանել ի քեզ զվարժապետ իմ բազմավաստակ, և ակն ունիմ՝ թէ որպէս անուանն նոյնպէս և գործօցն եղիցիս ժառանգորդ. այլ սակայն անսա դու բանից իմոց և մի լինիր այդքան շուտափոյթ, որպէս էրն և անուանակիցդ հոյակապ, այլ ջանա յամենայնի լրջութեամբ խորհիլ, խօսիլ և գործել: Գիտեմ թէ տղայական համեստութեամբ մերժեցեր ստանալ յինէն զայդ գրիչ, և ես ուրախանամ նշմարել ի քեզ զայդ յատկութիւն զոր ժառանգեալ ես ի բարեյիշատակ նախնեաց բոց. զի վեհանձնութիւն և հպարտութիւն լեալ է միշտ յատկանիշ Աթեան տոհմին, որոյ և ես եմ շառաւիղ:

Գիտես թէ ստացայ ես զայդ գրիչ ի բազմերախտ վարժապետէս ի ժամ ելանելոյն իմոյ աստի յամին 1851 գնալ ի Բաթավիա, և պահեալ եմ զայն անբաժան յինէն յօրէ անտի թէ ի Չավա, թէ յԱւստրալիա և թէ յԵւրոպա:



Տամ քեզ այժմ գայդ գրիչ հնացեալ, և կամիմ զի և դու պահեսցես գայդ ի յիշատակ վարժապետիս, որպէս և հօրաքեռդ թանգայ և իմ իսկ, յիշելով զհմտալից տողան Մեսրոպայ որ ասէ՝

«Զի կարծիք մարդկան
Ոչ իրին յարգ տան,
Այլ սոսկ միջոցին
Որով ստանան»։ (Սօս և Սօնդիպի)

Զամօթի հարայ ի լուրջ խրատական բանից պատկառելի ազգականի իմոյ, ուստի խոնարհաբար ներումն հայցեալ վասն անխոհեմ և յաւէտ յանդուգն պատասխանոյ իմոյ և առեալ զգրիչն՝ համրուրեցի զայն ջերմեռանդութեամբ հոգւոյս, մատուցանելով նմա ի նմին ժամու և զշնորհակալիս իմ անհուն և սրտագին վասն թանկագին նուիրատուութեանն։ Սկսայ անմիջապէս ըստ բաղձանաց նորին ընդօրինակել ըզցեցակեր ձեռագիրսն զայնոսիկ, որք և նոյն իսկ զբշաւ զբեալ էին ի թաղիաղեանէ յիսուն և առաւել ամօք յառաջ ի Պարսկաստան, ի Հայաստան, ի Տաճկաստան և հուսկ ուրեմն աստ ի Հնդկաստան։

Զմոռանամ յիշել և զայս՝ թէ բերեալ զայն գրիչ ընդ ձեռագրացն ի տուն մեր, ցուցի զայն ձեռունագարդ հօր իմում Յակովբայ Սէթեանց՝ որ զայնու ժամանակաւ էր ձեռունի եօթանասնամեայ, այլ սակայն թէ տեսութիւն աչացն և թէ տեսութիւն պահեցողական մտացն էին անվթար և կատարեալ ըստ ամենայնի։ Հարցի ցնա եթէ ճանաչէ՞րն զայն գրիչ՝ որ յետ գննելոյ զայն սուր աչօքն, ասաց թէ այդ այն գրիչ էր՝ զոր քոյր իւր թանգիսթուն նուիրեալն էր Մեսրոպայ էր՝ զոր քոյր իւր թանգիսթուն նուիրեալն էր Մեսրոպայ էր՝ զոր քոյր իւրեանց ըզվարդիսթուն. որովհետև բարեյիշատակ հայր իւրեանց բերեալ էր զայն ընդ իւր ի Սուրաթայ յամին 1799, և թանգ-

1. Այնքան խոր էին երախտագիտական ջերմ զգացմունք ի սրտի բարեյիշատակ հօր իմոյ, զի յօրէ անտի աշակերտութեանն յոտս բազմերախտ վարժապետին իւրոյ թաղիաղեանի ցվախճան կենացն, միշտ կոչէրն զնա «Մեսրոպ վարժապետ», և ոչ այլ իմն անուամբ՝ փեսայ կամ քեռայր։

խաթուն չունէր բնաւ իրաւունս նուիրել զայն ումեք թարց իւրոյ զիտութեան և հաւանութեան իսկ։ Յետ տարժանակիր և ոգեսպառ աշխատութեանց յաջողեցայ ընդօրինակել զամբողջ ձեռագիրսն, որք առաքեցան յետոյ ի կ. Պօլիս առ Աւագ քահանայն Մկրեան. այլ նա «առ անին Հրէից» և երկուցեալ ի խիստ և յանողօք գրաքննութենէ Համիդեան բռնակալութեան, եզ կախարիչ ի վերայ այնոցունց, և միայն ի լոյս ընծայեաց ի Տփլիս զ«Եղբերգութիւն յօրհաս թանգայ թաղիաղեանց» սքանչելարուեստ քերթուածն յամին 1893, խոստանալով հրատարակել և զմնացեալսն ընդ ընդարձակ և ճոխ կենսագրութեան քերթողին, զբելով յէջ 52 «Եղբերգութեանն» այսպէս.

«Մնայ մեզ այժմ ծանուցանել ընթերցանելեաց, թէ ի Հատորիս այսմիկ ամփոփեալ եմք զայլ և այլ ոտանաւոր քերթուածս թաղիաղեանի, հաղորդեալք առ մեզ ի Պ. Պ. Յովհ. Ծ. Սարգսեանէ և ի Մեսրոպ Զ. Սէթեանէ, և կամ ժողովեալք ի մէնջ, այլում պատեհի թողեալ որպէս ասացարս՝ առանձին տպագրութեամբ հրատարակել զ«թանգայ թաղիաղեանց»։ Արժանի վերձանութեան է այս գործ սքանչելարուեստ բանաստեղծութեան, զոր և ունիմք տալ ի լոյս՝ եթէ լիցի մեզ յաջողութիւն ի Տեառնէ։

Այլ սակայն բաղձանք Մկրեանի չիրականացաւ, և ի պատճառս ձերութեանն և Համիդեան բռնակալութեան չկարաց նա նախ քան զմահն՝ որ պատահեցաւ յամին 1909, ի լոյս ընծայել ոչ զճոխ կենսագրութիւն թաղիաղեանի և ոչ ևս զմնացեալ զանտիպ երկասիրութիւնսն քերթողին. և ո՞վ զիտէ թէ ո՞ր մնացին կամ զնացին ձեռագիրքն յետ մահու նորին, և կամ յ՞որ անկեան փոշոյ ցեցակեր եղեն, որով վեցամսեայ անդուլ վաստակ իմ և ոգեմաշ աշխատութիւն յընդօրինակութիւն ինքնագիր ձեռագրացն թաղիաղեանի յումպէտս մնացին, և ճգունք իմ եղեն արդարև զուր ջանք և անօգուտ մնացին, և ճգունք իմ եղեն արդարև տակաւին գտանին աստ առ իս վաստակ։ Բարեբաղդաբար ձեռագրացն և նշխարացն զրական անտիպ նախագաղափարք ձեռագրացն և նշխարացն զրական անտիպ երկոցն քերթողին, զորս ունիմ ընծայել ի լոյս, եթէ կամք երկոցն քերթողին, զորս ունիմ ընծայել ի լոյս, եթէ կամք իցեն երկնից և ինձ ևս կեանք. զի մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, ասեն զիրք. և նոյն ինքն թաղիաղեան ասէ թէ՛

խմբագիր «Արմէնիա» շաբաթաթերթին Մարտիլիոյ (որ աւանդ այլ ևս դադարեալ է յետ 38 ամաց անընդհատ վաստակոց) ակնարկելով սոյն սուր վիճարանութեան ի թիւ 46 ներկայ 1923 տարւոյն, ընդ վերնագրաւ «Հին վէճ մը», գրէրն ի միջի այլոց և գայս. «Հնդկահայ մեր հեռաւոր հայրենակիցնե-րու միջեւ վերջերս ծագեր է սուր վէճ մը գրաբարի և աշխարհ-հաբարի գործածութեան մասին, ճիշտ այնպէս ինչպէս ասկէ կէս դար առաջ նոյն պայքարը կը տեսնուէր Պոլսահայ մտա-ւորականներու միջեւ: Հնդկահայոց միջեւ ծագած այդ վէճի մասին ստացած ենք անգլիերէնով հրատարակուած տետրակ-ներ ալ: Հայ ազգը այնքան խնդիրներ ունի դեռ լուծելիք, որ այժմ չարժեր նման բիւզանդական վէճերով ժամավաճառ ըլլալ: Թողունք որ ժամանակը ինք հարթէ կնճիռները:

Յայտնի է թէ Հնդկահայերը, հետեւելով աւանդական սո-վորութեան, վաղուց ի վեր Հայ դասական ոսկեղինիկ լեզուով կ'արտայայտուէին գրականութեան մէջ, և այս դրութեան ամենավերջին և ուժեղ սիւնը դեռ կանգուն կը մնայ. յան-ձին մեր պատուական աշխատակից և քաջածանօթ հնախոյզ պատմաբան Տ. Մեսրոպը Յ. Սէթեանցի, որ ցարդ գրաբար լեզուով կը պատրաստէ իր բանասիրութիւնները, և որոնց ընդհատուած շարքը կը վերսկսինք հրատարակել մեր այս թուով: Ինչպէս կը տեսնուի, Տ. Սէթեանցի ոճը չափազանց յստակ է, լեզուն վերջին ծայր վճիտ ու դիրանասականալի, այնպէս որ անոր գրաբար արտայայտուիլը՝ աչքառու զարտու-ղութիւն մը չստեղծեր բնաւ արդի աշխարհաբարի կիրարկման մէջ, այլ ընդհակառակ, սիրուն ճաշակ մը կու տայ մեզ մեր դասական անմոռանալի լեզուէն՝ որ ինքնին զանձարանն է մեր արդի աշխարհաբարին»: Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ. զի դաշնակցական մտաւորականք աչս ունին՝ այլ ոչ տեսա-նեն, ականջս ունին՝ իսկ ոչ կամին լսել: Այլ դարձցուք ի նիւթ անզր գրութեանս յորմէ զարտուղի անկայ:

Դոյն գրչաւ գրեցի զառաջին բանասիրական յօդուած իմ ի «Հանդէս Ամսօրեայ» ուսումնաթերթին վիեննայի յա-զագս «Հայելի և Շտեմարան» լրագրացն կալկաթայի, որպէս և ի «Բազմավէպ» պատուական հանգիսաբանին վիենտոյ զ«Հինաւուրց ձեռագիր Հայ Աւետարանէն» որ զարդիս գը-

տանի ի վանս Անտոնեան Հարց ի Կ. Պօլիս, և որ երբեմն էր սեփհականութիւն Սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյն որ ի Թաղն Երևան անդ ի Նոր-Ջուղա:

Դոյն դիւթական գրչաւ գրեցի յամին 1895 զանգլիա-րէն «Պատմութիւն իմ Հնդկահայոց» (History of the Ar- menian in India), և դոյն գրչաւ իսկ գրեցի նամակ առ Հայասէր մեծ ձերունին Գլադստօն, որում նուիրեալ էի զիմ այն անդրանիկ երկասիրութիւն, և որ բարեհաճեցաւ պա- տուել զիմ անարժանութիւն ինքնագիր նամակաւ իւրով¹:

Ի դոյն գրչէ ելեալ են բազմաթիւ բանասիրական գրու- թիւնք իմ, որք հրատարակեցան ընդ ժամանակս ժամանակս յէջս յիշատակաց արժանոյ Շաբաթաթերթին ողբացեալ Փորթուգալեանի ընդ վերնագրաւ՝ «Երևելի Հայկազունք ի Հնդկաստան»:

1. Նշանակալից նամակ երջանկայիշատակ Մեծ Հայասիրին առ իմս նուա- սութիւն՝ էր օրինակ գայս.

HAWARDEN, May 1, 1896

MESROB J. SETH, Esq.,

11, Wellesey Square, E.,

CALCUTTA

Dear Sir,

I am gratified by the honour you have done me, and I thank you for your work.

I continue to regard with acute pain and shame the triumph of wickedness in Turkey over the whole civilised and Christian world. I know of no similar disgrace upon record.

The only and limited mitigation of these feelings is found in a deep reverence for all those Armenians who have preferred their faith to their life.

I was absent on the Continent during the greater part of the time since you kindly despatched your work, or it would have received a much earlier acknowledgment.

I have the honour to be,

Dear Sir,

Your very faithful and respectful

(Sd.) W. E. GLADSTONE.

Եւ զեռ հրատարակեսցին ի մօտոյ նմանօրինակ գրութիւնք, ելեալք ի դոյն բազմավաստակ գրչէ, յէջս պատուական «Բազմավէպին» և «Ամսօրեայ Հանդիսին»: Հրատարակեսցի յետ ոչ բազում աւուրց և «Պատմութիւն Մխիթարեան Միաբանութեան» զոր պատրաստեալ եմ ի լեզու անգլիացի՝ դարձեալ դոյն գրչաւ՝ ի գիտութիւն անգլիացւոց և անգլիացեալ Հնդկահայոց իսկ, որք չունին բնաւ գաղափար ինչ զգոյութենէ և զազգօգուտ երկդարեան գործունէութենէ ազգալոյս Ուխտին երանելոյն Մխիթարայ անմահի՝ որ նստի յերկնային խորանի անդ, ուր բազմին երանելի Լուսաւորիչք Հայաստանեայց, Ս. Գրիգոր, Սահակ, Մեսրոպք, Ներսէս և Շնորհալի:

Իսկ արդ ի յիսնամենի վաղաժաման ծերութեան և երեկոյացեալ աւուրքք, յորժամ խորհրդեամբ բժշկաց այլ ևս ստիպեալ եմ ի վայր դնել զիմ փձուն գրիչ բազմաշխատ՝ հակառակ սրտագին բաղձանաց իմոց, սակայն ի պատճառս խանգարեալ և խախտեալ առողջութեան անձին, ուստի չըկամիմ զի անկանիցի այդ գրիչ ի ձեռս անարժանից, որպէս էին երբեմն և սրտագին բաղձանք անմահ բերթողին Թաղիադեանի 72 ամօք յառաջ աստ ի կալկաթա. յայն սակս սիրով և խորին հաճութեամբ նուիրեմ զայդ նշանակալից և բազմաբեղուն գրիչ Թանգարանի Մխիթարեան պատուարժան Միաբանութեան, գնալ անդ յանդորրու յետ բազմարկածեան կենացն՝ ի Մխիթարակերտ Մենաստանին առ ընթեր հօր և պատմական գրչացն Չամչեանի, Աւետիգեանի, Խնձիճեանի, Զախճախեանի, Բագրատունւոյ, Հիւրմիւզեան հարազատաց, Քաջունւոյ, Ալիշանի և Կիրեղեանի. զի Թաղիադեան, որ ըստ բանից իւրոց իսկ լեալ էր՝ «մերթ պատմաբան Հնդկաստանի, մերթ փերեզակ յերկրամիջի, մերթ գրաշար տպարանի և մերթ հիւանդ գետնախշտի», էր թէ պատմաբան՝ և թէ վիպասան,՝ թէ բերթող՝ և թէ բերական,՝ թէ մատենագիր՝ և

1. Հեղինակ «Պատմութեան Հին Հնդկաստանի» և «Պատմութեան Պարսից»:
 2. Հեղինակ «Վէպ Վարդգեսի Տեան Տուհաց» և «Վէպ Վարսենական սկալուսոյ Աղուանից»:
 3. Հեղինակ «Թութակ Թաղիադեանց», «Թանգարան Թաղիադեանց» (անտիպ), «Եղբերորդութիւն յօրհաս Թանկայ Թաղիադեանց» և «Սօս և Սօնդիպի» երկոց:
 4. Հեղինակ «Մեսրոպեան Երազգրիչ Հայ և անգլիական լեզուաց»:
 5. Հեղինակ «Ճանապարհորդութեան ի Հայ», «Գլխաբանութեան», և «Ճառ դաստիարակութեան օրիորդաց»:

թէ հրապարակագիր¹, թէ վարժապետ² և թէ Աստուածաբան³ Հնդկահայոցս, և գնահատող Մխիթարեանք ժամանակին իրաւամբ իսկ մկրտեցին և կոչեցին զինքն «Սոխակ Հնդկահայոց», իսկ ինքն Թաղիադեան հրճուանօք անուանէր զկղզեակն Սուրբ Ղազարու «Ակն Պայծառ Հայ Գրագիտութեան»:

Գնաս բարեաւ գրիչդ իմ սիրական և յաւէտ բազմաչարչար, որ զերեսուն և առաւել ամս անմոռնչ տանջեցար, հալեցար և մաշեցար ի ներքոյ անողոր և անդադար մատանց իմոց, և եղեր վասն իմ ոչ միայն գրիչ անգօր՝ այլ և բրիչ հօր, որոնելով, պեղելով և ի խաւարէ ի լոյս ածելով զըբեալ, որոնելով, պեղելով և ի խաւարէ ի լոյս ածելով մոռացութեան մնացեալ և զկորուսեալ և ընդ հոլով մոռացութեան մնացեալ նշխարան հնութեանց հոյակապ Հնդկահայոց, որք անոանց ներշնչման որ առ ի քէն՝ անտարակոյս գնային և մնային յանյատակ վիհ անյարիր կորստեան՝ առանց յուսոյ յարութեան, ի վնաս տոհմային և գաղթական պատմութեան:

Այլ թէպէտե արժամ բաժանեալ հեռանաս յինէն մինչ իսպառ, այլ սակայն մխիթարիմ՝ զի գնաս պանդխտիլ յայնպիսի իմն տեղուջ և ի միջի այնպիսի ասպնջականաց՝ որք կարեն ըստ արժանւոյն գնահատել զարժանիս զառամեալ և պատկառելի ծերունւոյդ, որ այլ ևս հանգստեան պէտս ունիս յետ այսքան ամաց անխոնջ և անընդհատ վաստակոց, ճգանց, տրեղութեանց և անվերջ թափառանաց յերկրէ յերկիր՝ ի ծուրուց և ի ցամաքի, ի սառնամանեացն հիւսիսոյ ցձինդ հրայրեաց և օն անդր:

Ե՛րթ խաղաղութեամբ, և յորժամ Աստուծով ժամանիցես անփորձ և անվտանգ ի գեղեցիկն Վենետիկ, գնա՛ նախ յուրտ և յերկրպագութիւն ի «Սուրբ Խաչ» եկեղեցին որ առ երի հրապարակին Սրբոյն Մարկոսի, զոր կառուցեալ էին նախկին Հայ վաճառականք ի բաղաքին յայնմիկ յերեքտասակն ներորդ դարուն, և յետոյ երիցս վերաշինեալ և նորոգեալ ի

1. Խմբագիր «Ազգասէր» լրագրի ի 1845 ամէն ցամա 1852:
 2. Հեղինակ «Մեսրոպեան Այրենարանի», «Առաջնորդ Վանկանց» և ուսուցչապետ «Ամենափրկչեան ճեմարանին» ի Նոր-Ջուղա, որպէս և հիմնադիր իւրոյ «Սուրբ Սանդուխտ» երկեսո զպրոցին ի կալկաթա:
 3. Թարգմանիչ «Հոգնի Գրովախոսի ձեռնարկութեան Քրիստոնէական Հաւատոյ» զոր ի Լատինէ ի Հայ ած Մեսրոպք Գաւթեան Թաղիադեանց, Սարկաւազ սրբոյ Էջմիածնի:

« Ազգային գրադարան



NL0371885

65.812